ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-7/50-1

ք. Երևան 26.02.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Իմմունոֆարմ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Խ. Շաքարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 36240000 (երեսունվեց միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են

ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 2019թ. դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Իմմունոֆարմ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան Հ. Ներսիսյան 10-1/3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 1930009392180100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00650292
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՍԲԱՐՅԱՆ	Խ. ՇԱՔԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-7/50-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման առարկայի անվանում	Տեխնիկական բնութագիր
1	Ֆիզիկոքիմիական հետազոտության լաբորատորիայի կահույքի հավաքածու	• Սեղան քիմիապես կայուն մակերեսներով, 160սմ X85սմX60սմ չափերով լվացման սեղան ներկառուցված 2 ջրի ծորակ, 2 լաբորատոր լվացարան, 2 չորանոց, Դարակաշարերի կառուցվածքը՝ 2 ուղղահայաց բացվող 55սմ դռներից և 50սմ լայնքով 3 դարակաշարերից, ոտքերը 12-15սմ չժանգոտվող մետաղից: • Սեղան քիմիապես կայուն մակերեսներով, 180սմ X85սմ X60սմ չափերով ներկառուցված 2 ջրի տվիչ, 2 ջրի արտահանիչ կառուցված սեղանի մակերեսից 15-20սմ բարձրության վրա, 30 սմ սեղանի մակերեսից բարձր տեղադրված վարդակներ 220Վ հոսանքի սնուցման համար: Դարակաշարերի կառուցվածքը՝ 3 ուղղահայաց բացվող 60սմ դռներից յուրաքանչյուր բացվող դռան վերնային մասում կառուցված քաշվող դարակաշար 20 սմ բարձրությամբ, ոտքերը 12-15սմ չժանգոտվող մետաղից: • Սեղան քիմիապես կայուն մակերեսներով, 180սմ X85սմ X60սմ չափերով 3 սեղան ,15-20 սմ սեղանի մակերեսից բարձր տեղադրված 3 վարդակներ 220Վ հոսանքի սնուցման համար: Դարակաշարերի կառուցվածքը՝ ձախակողմյան 1 ուղղահայաց բացվող 50սմ դռնից վերնային մասում կառուցվածք քաշվող դարակաշար 20 սմ բարձրությամբ, աջակողմյան հատվածում 50սմ լայնքով դարակաշար 3 հավասարաչափ դարակներից կազմված ոտքերը 12-15սմ չժանգոտվող մետաղից: • Սեղան քիմիապես կայուն մակերեսներով, 200սմ X85սմ X60սմ չափերով սեղան ,15-20 սմ սեղանի մակերեսից բարձր տեղադրված 3 վարդակներ 220Վ հոսանքի սնուցման համար: Դարակաշարերի կառուցվածքը՝ ձախակողմյան 1 ուղղահայաց բացվող 50սմ դռնից վերնային մասում կառուցվածք քաշվող դարակաշար 20 սմ բարձրությամբ, աջակողմյան հատվածում 50սմ լայնքով դարակաշար 3 հավասարաչափ դարակներից կազմված ոտքերը 12-15սմ չժանգոտվող մետաղից: • Քիմիապես կայուն մակերեսներո սեղան կղզի, բաղկացած՝ 150սմ X85սմ X60սմ չափերով-6 սեղաններից և 120սմ X85սմ X60 սմ լվացման սեղանից, որոնք միաժամանակ հավաքվելով կազմում եմ սեղան կղզին 510սմ X85սմ X120սմ չափերով Դարակաշարերի կառուցվածքը՝ յուրաքանչյուր 150սմ X85սմ X60 սմ չափերով սեղան ձախակողմյան 1 ուղղահայաց բացվող 40սմ դռնից, աջակողմյան հատվածում 40սմ լայնքով դարակաշար 3 հավասարաչափ դարակներից կազմված, 120սմ X85սմ X60սմ չափերով լվացման սեղան ներկառուցված 2 ջրի ծորակ, 2 լաբորատոր լվացարան, 2 չորանոց, Դարակաշարերի կառուցվածքը՝ 2 ուղղահայաց բացվող 60սմ դռներից , բոլոր սեղանների ոտքերը 12-15սմ չժանգոտվող մետաղից: Կղզի սեղանի վերնային մասը՝ սեղանի մակերեսից 50 սմ բարձրության վրա 2 բաց դարակաշար իրարից 20սմ հեռավորությամբ, դարակաշարի լայնքը 20սմ դարակաշարերը սեղանին են ամրանում 12սմ X20սմ մինչև 170 բարձրացող -2 եզրային և 70 սմ -1 ոտնակներով: • Լաբորատոր քարշիչ համակարգ - 2 հատ 180սմ X200սմ X65 սմ Ներկառուցված լվացարանով , ջրի հոսքով և վարդակներով, նյութի տեսակը չժանգոտվող մետաղ , օդի հոսքը 3 աստիճան կառավարմամբ, լամինար, տեղադրումից հետո կարգաբերում • Նմուշների պահման պահարան լայնք 100սմ, բարձրություն 180սմ, խորություն 60սմ, կիսված 4 հավասար մասի • Ապակեղենի պահման պահարան լայնք 60սմ, բարձրություն 180սմ, խորություն 60սմ, կիսված 2 հավասար մասի • Մետաղական պահարան թունաքիմիկատների և ազդանյութերի պահման համար լայնք 60սմ, բարձրություն 160-180սմ, խորություն 60սմ, կիսված 2 հավասար մասի, օդաքարշ համակարգին միանալու հնարավորությամբ: Կահույքի չափսերում թույլատրելի շեղումը ± 1%, ընդունելի գույնը՝ միանման երանգի /կապույտ, ծիրանագույն, մոխրագույն, սպիտակ կամ նշված գույների համադրությամբ/ նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ:
2	Մանրէաբանական լաբորատորիայի կահույքի հավաքածու	• Սեղաններ միկրոբիոլոգիայի համար 1.2մ երկարություն 60սմ լայնք, 85սմ բարձրություն միկրոբիոլոգիական միջավայրում աշխատելու համար, մակերեսը ողորկ, քիմիապես՝ մաքրող միջոցների նկատմամբ կայուն, ունենա արտադրողի կողմից

		տրված համապատասխան սերտիֆիկատի առկայություն: Կողային բացվող պահարանով 60սմ X50սմ X50սմ: Դարակաշարերի թույլատրելի շեղությունը ±10%: Գետնից 12-15սմ կարգավորվող ոտքերով: Սեղանների քանակը՝ 3 հատ: • Սեղան միկրոբիոլոգիայի համար 1.2մ երկարություն 60սմ լայնք, 85սմ բարձրություն միկրոբիոլոգիական միջավայրում աշխատելու համար, մակերեսը ողորկ, քիմիապես՝ մաքրող միջոցների նկատմամբ կայուն, ունենա արտադրողի կողմից տրված համապատասխան սերտիֆիկատի առկայություն: Սեղանի մակերեսին տեղադրված 2 լվացարան յուրաքանչյուրը առանձին տաք և սառը ջրի ծորակներով լվացարանի տակ փակվող 2 հավասար դռներով: Գետնից 12-15սմ կարգավորվող ոտքերով: • Սեղան միկրոբիոլոգիայի համար 1.2մ երկարություն 60սմ լայնք, 85սմ բարձրություն միկրոբիոլոգիական միջավայրում աշխատելու համար, մակերեսը ողորկ, քիմիապես՝ մաքրող միջոցների նկատմամբ կայուն, ունենա արտադրողի կողմից տրված համապատասխան սերտիֆիկատի առկայություն: Սեղանի մակերեսին տեղադրված 1 լվացարան առանձին տաք և սառը ջրի ծորակներով, լվացարանի տակ փակվող 2 հավասար դռներով: Գետնից 12-15սմ կարգավորվող ոտքերով: • Սեղաններ միկրոբիոլոգիայի համար 1.8մ երկարություն 60սմ լայնք, 85սմ բարձրություն միկրոբիոլոգիական միջավայրում աշխատելու համար, մակերեսը ողորկ, քիմիապես՝ մաքրող միջոցների նկատմամբ կայուն, ունենա արտադրողի կողմից տրված համապատասխան սերտիֆիկատի առկայություն: Աջ կողային բացվող պահարանով 60սմ X50սմ X 50սմ, ձախ կողմում դարակաշար բաղկացած 3 հավասար դարակներից 50սմ լայնքով և ընդհանուր 60սմ բարձրությամբ: Դարակաշարերի թույլատրելի շեղությունը ±10% Գետնից 12-15սմ կարգավորվող ոտքերով: Սեղանների քանակը՝ 4 հատ: • Սեղաններ միկրոբիոլոգիայի համար 1.8մ երկարություն 60սմ լայնք, 85սմ բարձրություն միկրոբիոլոգիական միջավայրում աշխատելու համար, մակերեսը ողորկ, քիմիապես՝ մաքրող միջոցների նկատմամբ կայուն, ունենա համապատասխան սերտիֆիկատի առկայություն: Կողային բացվող պահարանով 65սմ X55սմ X 60սմ: Սեղանի մակերեսին տեղադրված 1 լվացարան յուրաքանչյուրը առանձին տաք և սառը ջրի ծորակներով լվացարանի տակ փակվող 2 հավասար դռներով: Դարակաշարերի թույլատրելի շեղությունը ±5%: Գետնից 12-15սմ կարգավորվող ոտքերով: Սեղանների քանակը՝ 2 հատ: • Լաբորատոր պահարան 1 մետր լայնք 60սմ խորություն 180սմ բարձրություն , պահարանի ներքևից 90սմ բարձրության վրա կիսված 2 փակ դռներ 3 դարակաշար: Վերևի հատվածը հավասար կիսված 3 դարակաշատ ապակյա դռներով: • Լաբորատոր պահարան 1մետր լայնք 60սմ խորություն 180սմ բարձրություն, պահարանի ներքևից 90սմ բարձրության վրա կիսված 2 փակ դռներ 3 դարակաշար: Վերևի հատվածը հավասար կիսված 3 դարակաշատ ապակյա դռներով: 2 պահարաններում տեղադրված Ուլտրամանուշակագույն լույս՝ ստերիլացման համար: Կահույքի չափսերում թույլատրելի շեղումը ± 1%, ընդունելի գույնը՝ միանման երանգի /կապույտ, ծիրանագույն, մոխրագույն, սպիտակ կամ նշված գույների համադրությամբ/ նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ:
3	Նմուշապատրաստման սենյակի օդաքարշ համակարգ	Քարշիչ համակարգ կազմված • քիմապես կայուն անվտանգ աշխատանքի խցիկից ' • չափսերը ' Բարձրությունը 200±5%սմ , Լայնությունը 155±5%սմ , Խորությունը 80±5%սմ, • դիմապակին ավտոմատ կառավարվող, պատրաստված իներտ ֆտորոպլաստից: • Ներքին մակերեսները պատված բարձր որակի թթվակայուն կերամիկայից և էպոքսիռեզինից համապատասխան DIN 5102 ստանդարտի: • Ծորակի և գործարանային լույսի աղբյուրի և էլեկտրական վարդակների առկայություն միջազգային ստանդարտներին համապատասխան (EN 14175): • Քարշիչ համակարգ, բարձրորակ քիմիապես կայուն ֆիլտրերով: (Շարժիչը ներառված) • Օդի հոսքի արագության (դուրս բերման և ներմղման) 3 աստիճան կարգավորում: Մինիմալ արագությունը 0,4մ 3/վ, Օդի հոսքի կարգավորման վիզուալ ինդիկատորի առկայություն: Արագությունը չափագրված EN 14175 part 3 համաձայն սերտիֆիկատի առկայություն:

		• Ներքին ջերմաստիճանային սենսորի առկայություն • Թթուների և հիմքերի համար նախատեսված, քիմիապես կայուն մետաղական չիրկիզվող պահարանից՝ • Չափսերը Բարձրությունը 90±5%սմ , Լայնությունը 155±5%սմ , Խորությունը 76±5%սմ, Ներքին մակերեսը պատված հակակոռոզիոն քիմիապես կայուն էպօքսի նյութով • Պահարանների կողփման հնարավորություն: • Հրակայուն, համաձայն EN 14470-1 ստանդարտի • Երկթևանի համակարգ բաղկացած՝ 1 հատ 20-25սմ օդահան և 1 հատ 20-25սմ օդամուղ՝ նախատեսված օդի ելքի և մուտք իրականացնելու համար: Յուրաքանչյուր թևի առանձին կառավարման հնարավորություն, ինչպես նաև միաժամանակյա կառավարում: Մուտքի օդի հոսքի հատվածում տեղադրված ,,HEPA,, Ֆիլտր: Հովանոց PVC տիպի հումքից առաստաղից կախված կոնաձև անկյունային թեքվածությամբ -2 հավաքածու համալրված կախիչներով: Գծային օդամուղներ իր ճկուն միացումներով, արագության երկակի կառավարումով, ավտոմատ կառավարման համակարգ-2 հատ, Էլեկտրոլարեր - 2 հավաքածու անցկացումը և միացումը՝ Մատակարարի միջոցներով Համակարգի տեղադրումը իրականացվում է մատակարարի կողմից և միջոցներով: Մատակարարը կատարում է կարգաբերում, թողարկում, ծանոթացում համակարգի աշխատանքին:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Հ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2019թ-ին՝ ըստ եռամսյակների
						3-րդ եռամսյակ
1	Ֆիզիկոքիմիական հետազոտության լաբորատորիայի կահույքի հավաքածու	հատ	1	11880000	11880000	1
2	Մանրէաբանական լաբորատորիայի կահույքի հավաքածու	հատ	1	16800000	16800000	1
3	Նմուշապատրաստման սենյակի օդաքարշ համակարգ	հատ	1	7560000	7560000	1

Նշանություն՝ Ապրանքները հանդիսանում են հիմնական միջոց: Երաշխիքային ժամկետը ոչ պակաս 1 տարի:
Ապրանքների մատակարարման վայրը ք. Երևան, Արշակունյաց 73ա:
Պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացումը պարտադիր է:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011024537
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Իմմունոֆարմ» ՍՊԸ
ք. Երևան Հ. Ներսիսյան 10-1/3
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930009392180100
ՀՎՀՀ 00650292
Տնօրեն

Խ. ՇԱՔԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-7/50-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ.-ին ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ.՝ ընդ որում				
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Ֆիզիկոքիմիական հետազոտության լաբորատորիայի կահույքի հավաքածու	33191120/7	11880000	11880000	11880000	11880000	11880000
2	Մանրէաբանական լաբորատորիայի կահույքի հավաքածու	33191120/8	16800000	16800000	16800000	16800000	16800000
3	Նմուշապատրաստման սենյակի օդաքարշ համակարգ	39717200/2	7560000	7560000	7560000	7560000	7560000

Ծանոթություն՝ Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործադրման վարչություն
Հ/Հ 900011024537
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ա. ԴԱՄԲԱՐՑԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Իմմունոֆարմ» ՍՊԸ
ք. Երևան Հ. Ներսիսյան 10-1/3
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930009392180100
ՀՎՀՀ 00650292
Տնօրեն

Խ. ՇԱՔԱՐՅԱՆ

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն